

Միրելի բարեկամ,

«Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնի պատմությունը մեկնարկել է 2005 թվականից: Առաջին իսկ օրվանից տրվում էին այս հարցերը՝ «Ինչո՞ւ և ինչո՞վ է Վարդանանցը նորարարական»:

Արդարության համար պետք է նշել, որ այսօր այդ հարցը գրեթե չի հնչում: Վարդանանցն իր զարգացման պատմությամբ ցույց է տալիս, որ նորարարությունը մասնագիտությանը որպես գիտություն, միջմասնագիտական հարաբերությունների, հաճախորդի անձի, ժամանակի, վախերի և շահերի հանդեպ նուրբ վերաբերմունքն է:

Այսօր Վարդանանցն առաջնային օդակի առողջապահական ճանաչված կառույց է, որը նաև առաջին խոստումնալից քայլերն է անում հիվանդանոցային օդակում: Այո, բացումից 20 տարի անց, 2025 թվականին Վարդանանցը մուտք գործեց ինվազիվ սրտաբանության, էնդոսկոպիկ վիրաբուժության, լագերային զինեկոլոգիայի, ՔԿԱ, անոթային, ուրոլոգիական և օրթոպեդիկ վիրաբուժության բնագավառներ: Հեռանկարային են նաև պլաստիկ վիրաբուժության, պրոկտոլոգիայի, ողնաշարի ճողվածքների և էնդոկրին վիրաբուժությունների ոլորտները: Բոլոր անհրաժեշտ սարքավորումներն արդեն առկա են և տեղադրված վիրասրահներում: Աշխատանքներ են տարվում վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքն ամենաբարձր՝ առաջին կատեգորիայով արտոնագրելու ուղղությամբ:

Բոլոր նշված ծառայությունները կոչված են հոգալու Վարդանանցի՝ պետպատվերով կցագրված 88 000 քաղաքացիների, 70 000 ապահովագրված և ավելի քան 50 000 վճարովի հիմունքներով սպասարկվող մշտական հաճախորդների առողջությունը փակ շղթայի սկզբունքով, որը ներառում է կանխարգելման, ամբուլատոր, վիրահատական և վերականգնողական ծառայությունները:

Բայց վերադառնանք Վարդանանցի նորարարությանը

Կա երեք ունիկալ բաղադրիչ, որոնք ընդգծում են Վարդանանցի առանձնահատկությունը, դրանք են՝

- ա)** աշխատանքային գործառույթների հստակ նկարագրություն՝ հիմնականում շահառու – հաճախորդ գաղափարախոսությամբ,
- բ)** գործառույթների կառավարում՝ թվային համակարգերով,

գ) բուժման տեխնոլոգիաների ունիֆիկացում և դրանց կիրառման վերահսկում՝ գործելակարգերի միջոցով:

Այսպես, ներկայումս Վարդանանցում ներդրվել և կիրառվում են հանախորդի էլեկտրոնային քարտ, ինչպես նաև այցի գրանցվելու, հերթերի կառավարման, լաբորատոր անալիզների առաքման, ռադիոլոգիական հետազոտությունների պահպանման, աշխատավարձի և այլ հաշվապահական ու նորմատիվ ցուցանիշների հաշվառման, հաշվետվությունների գեներացման ավտոմատ համակարգեր, որոնց շնորհիվ իրականացվում է «0 թղթային փաստաթուղթ» նախագիծը:

Որպես մեկնարկած նախագծեր՝ հարկավոր է նշել արհեստական բանականության կիրառումը՝

ա) բուժման որակի վերահսկման,

բ) միջին և երկարաժամկետ արդյունքների,

գ) հանախորդների գոհունակության մշտադիտարկման նպատակով:

Քննարկման և նախագծման փուլում են՝

ա) արհեստական բանականության կողմից «երկրորդ կարծիքի» տրամադրում՝ ռադիոլոգիական և լաբորատոր հետազոտությունների արդյունքների վերաբերյալ,

բ) բուժանձնակազմի վարքագծային վերլուծության արդյունքում՝ գործելակարգերից և կանոնակարգերից հայտնաբերված շեղումների վերաբերյալ նյութերի տրամադրում, դրանց հիման վրա թեստերի գեներացում և բուժանձնակազմի թեստավորում՝ արհեստական բանականության կողմից (Ադապտացված ուսուցում),

գ) հետևյալ ժամանակակից տեխնոլոգիաներով ուսումնական մոդուլների պատրաստում՝ կիրառելով Վարդանանցում մշակված և տարեկան թարմացվող շուրջ 400 կլինիկական գործելակարգերը:

- PBL (Problem-Based Learning)
- CBL (Case-Based Learning)
- Team-Based Learning (TBL)
- AI-driven radiology training).
- VR (Virtual Reality) և AR (Augmented Reality)

Հեռանկարում տվյալ մոդուլները Վարդանանցի և ՀՀ տարածքից դուրս՝ թվային տեխնոլոգիաների շնորհիվ հանրահռչակելն է:

Վերջին կետի իրականացման նպատակով Վարդանանցի ներքո ստեղծվել է «Մասնագիտական գերազանցության ուսումնագիտական կենտրոն»-ը:

Վարդանանցը, հավատարիմ մնալով զարգացման իր տեսլականին, ձգտում է պահպանել սարքավորումների ձեռքբերման և անձնակազմի ուսուցման ծախսերի ցուցանիշների ներդաշնակությունը:

Հաշվի առնելով վերջին տարիների ինտեսիվ աշխարհագրական, տարածքային և անձնակազմի աճը՝ ներդրումների հավասարակշռությունը խախտվել էր՝ հոգուտ նյութական ձեռքբերումների: Որպես օրինակ՝ կարող ենք նշել Երևանում՝ («Քոչար», «Նանսեն») և Վանաձորում մասնաճյուղերի բացումը, և վերջիններիս՝ մոտ 2 մլրդ դրամի արժողությամբ սարքավորումներով հագեցումը: Այս շարքում հերթը եկել է մինչև 1 մլրդ ՀՀ դրամ գնահատվող նախագծի՝ 3 տեսլա հզորությամբ ՄՌՏ (MRT) գերժամանակակից սարքավորման ձեռքբերմանը, որով նյութական բազան կհամարվի լիովին համալրված:

Այսպիսով, 2025–2027 թվականների հիմնական ֆինանսավորումը ուղղվելու է մարդկային ռեսուրսի, բուժական և թվային տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև «Վարդանանցի ձեռագիր» նախագծի իրականացմանը: Վերջինս նախատեսում է ձևավորել Վարդանանցի բուժման ունիֆիկացված, ունիկալ և ճանաչելի ոճ, որի հիմքում կլինեն միջազգային լավագույն ապացուցողական մոտեցումները և բուժառուի անհատականության արժևորումը: Գործնական անելիքներն են՝

- բուժառուների վարման ինտեգրված համակարգի ձևավորում՝ հիմնված միասնական ստանդարտների և այգորիթմների վրա,
- մասնագետների միջև միջմասնագիտական փոխգործակցության զարգացում:

Համոզված ենք, որ այս ճանապարհն է հայաստանյան առողջապահության ապագան: